

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՎԱՔԻ
ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

1. Բնարական մանր ստեղծագործությունների, սիրերգերի /խաղիկներ, չաստուշկաներ/ դասակարգումը ողուս և այլ ժողովուրդների /էստոնական, բելոռուսական, ուկրաինական, հյուսիսսլովակացյան/ բանազետություն մեջ կատարվել է ըստ նյութի զրաուման վայրի, ժամանակի և պատմա-ազգագրական շրջանի /Բախտին, Բոկոլա, Վլասոկա, Գորելով, Շեյն, Կալուցկի, Ռադչենկո, Մալեիչ և այլոք/:

2. Հայ բանագիտության մեջ խաղիկների գիտական համակարգումը սկզբնավորվում է Մ. Աբեղյանով, դարասկզբին, և որոշ քննադատմաներով ավարտվում 1920-1930-ական թթ.: Կիրառվել է խաղիկների խմբավորման և դասակարգման արաբական այբբուբենի սկզբունքը՝ աշից ձախ, տողավերջի բառի վերջից դեպի առաջ:

3. Հայ ժողովրդական խաղիկների գիտական համահավաքի՝ նոր համակարգով և նորագույն զրաումաներով կազմելու հարցը հայ բանագիտության մեջ վերստին բարձրացվեց 1970-ական թթ. և ավարտվեց 1982 թ.: Ներկա փուլում դրված է խաղիկների վերակազմված առանցքային վարկածների համակարգման, գիտական համահավաքում դրանց դասակարգման խնդիրը:

4. Խաղիկների առանցքային վարկածների նախնական համադրման փորձերը հնարավոր դարձրին առաջադրելու դրանց համակարգման հետևյալ ձևերը.

ա/ ըստ տողերի մոտիվային խմբերի, հիմք քնդուսնելով առաջին տողում առկա մոտիվը /Բոստան եմ դրե. Ես աղջիկ եմ ալ կուզեմ. Կաքավը կայնեք քարին և ալն/։ Բ/ ըստ ստեղծագործությունների առաջին տողի հանգակազմ տարրերի /արան, յարան, սարան. ձորեն եմ, ցորեն եմ, խնձորեն եմ/, Գ/ կարելի է նաև ըստ խաղիկի առաջին տողի, առաջին բառի, Դ/ հայ ժողովրդական խաղիկների բազմաբնույթ տարբերակները համահավաքում խմբավորված են խաղիկների առաջին երկու տողի բառային խիստ քնդհանրության հիմամբ, որով և հնարավոր եղավ հինգից ավելի /մինչև 47/ տարբերակ ունեցած խմբերից ստանալ մեկ առանցքային վերակազմված ստեղծագործություն։ Դասակարգման հիմք կարելի է քնդուսնել նաև առանցքային վարկածների առաջին երկուտղը, ըստ այդմ, բառային քնդհանրության փոխարեն համակարգումը պետք է քննադատ ըստ տաղաչափական հատկանիշների վանկերի թվի և ոտքերի տեսակների:

5. Ձևաբանական դասակարգման այս ձևը հնարավորություն կընձեռնի ձևական և թեմատիկ ցնդահարություն ունեցող առանցքային վարկածները համակարգելու առանձին խմբերով:

ԱՅՈՒՋԱՆ ԳՈՒԼԼԱԿՅԱՆ

ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇՄԱՏՈՒՄ

ՀԵՔԻԱՔՆԵՐՈՒՄ

1. Հեքիաթների անձանուկների /անտրոպոնիմիա/ ուսումնասիրությունը հույժ ուշագրավ է ինչպես այդ ժանրի ոմի հետազոտման, այնպես էլ այս կամ այն ազգային ռեպերտուարի առանձնահատկությունների ուղղման առումով: Այդ խնդիրներին մերժենալու համար անհրաժեշտ է պատասխանել մի շարք էական հարցերի: Ո՞ր դեպքում է հեքիաթային անձն ստանում անուն. հատուկ անուն ունեցող, թե՞ անուն ուն հերոսներն են գերակշռում. ինչպիսի՞ աղբյուր կա անվան և անձի միջև:

2. Վերանալով հայկական հրաշապատում հեքիաթների անձանց կերպարներից ու Փոռկեցիաներից, այստեղ քննվում է նրանց նշանակությունը, այսինքն՝ թե ինչպիսի անվամբ են նրանք հանդես գալիս շահահարության մեջ:

3. Շահահարության մեջ մտած համանման դեմքերի համար օգտագործվում են տարբեր կարգի անուններ: Հեքիաթային անձը կարող է ունենալ հատուկ անուն, միաժամանակ որևէ հատկանիշ՝ քստ սեռի, տարիքի, սոցիալական վիճակի, զբաղմունքի: Հատուկ անուն ունենալու դեպքում, այդ հատկանիշները դառնում են անձի անուն, որով և կա հորշորջվում է շահահարության մեջ:

4. Մեր ուսումնասիրած 567 տեքստի մեջ /նախահեղափոխական մի շարք հրատարակություններից և ,,Հայ ժողովրդական հեքիաթների,, ինքն հատորից/ հանդիպում ենք տղամարդու 220 և կնոջ 59 անուն: Հայկական հրաշապատում հեքիաթների անունները համադրելով Հ. Ամառյանի ,,Անձանուկների բառարանի,, և Կ. Դուրգարյանի անվանացանկի անունների հետ, գտանք, որ անձանուկների մեջ տարբերակվում են. ա/անուններ, որոնք կարող են ստուգաբանվել հայերեն /օր. Լուսերեսիկ, Ավետիս/, բ/անուններ՝ հեռավոր անցյալում փոխառված եբրայերենից, պահլավերենից, հին հուևարենից /օր.՝ Արշակ, Սահակ, Մարկոս/, գ/պարսկական /իրաևական/, արաբական, թուրքական ծագմամբ անուններ /օր.՝ Ալո-Դինո, Ամեդ, Սարում/, դ/ բանասացի մտացածին /հնարովի/ անուններ: Հայկական հրաշապատում հեքիաթներում բացակայում են եվրոպական և ռուսական